ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ
26.03.26թ., ժամը՝ 15:00-17:00

Խորհրդի անցկացման վայրը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Նիստը նախագահում էր ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը

Նիստին մասնակցում էին ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի անդամներ՝

Նունե Սարուխանյանը	-	«Գյուղատնտեսության աջակցության Կանաչ արահետ» հասարակական կազմակերպություն
Սոնա Թելունցը	-	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն/CARD» հիմնադրամ
Արսեն Ղազարյանը	-	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն»
Հերմինե Թովմասյանը	-	«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա»
Կարեն Զաքարյանը	-	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա
Նունե Մանուկյանը	-	«Արենի փառատոն հիմնադրամ»
Հակոբ Ավագյանը	-	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա»
Սեդրակ Մամուլյանը	-	«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպություն
Մերուժան Զադայանը	-	«Անասնաբույժներ առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
Սարգիս Կարապետյանը	-	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն
Հայկ Մինասյանը	-	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն
Արմեն Ավետիսյանը	-	«Տոհմային կենդանիների անասնաբույծների ասոցիացիա»
Մարատ Ատովմյանը	-	«Իրավաբանների հայկական ասոցիացիա»
Մարիամ Մանուկյանը	-	«ՀՀ միջազգային գործարար կապերի աջակցման խորհուրդ»
Ավագ Հարությունյանը	-	«Գինու ազգային կենտրոն» հասարակական կազմակերպություն

Փոխարինում էին՝

Վահան Հարությունյանին՝ Հրաչ Մուրադյանը	-	«Հայաստանի շինարարների միություն» հասարակական կազմակերպություն
Վարդան Ջհանյանին՝ Աննա Ավետիսյանը	-	«Հայատանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Վահագն Համբարձումյանին՝ Լիլիթ Ադամյանը	-	«Հայաստանի գործատուների հանրապետական միություն»

Բացակայում էին՝ (Հարգելի պատճառով)

Մեխակ Ապրեսյանը	-	«Տուրիզմի հայկական ֆեդերացիա»
Էլինա Մակարյանը	-	«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից՝

Լիլիթ Շաբոյանը	-	Նախարարի մամուլի քարտուղար, ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի համակարգող պաշտոնատար անձ
Անժելինա Չիլինգարյանը	-	Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի պատասխանատու պաշտոնատար անձ

Օրակարգում ընդգրկված էր 5 հարց՝

1. *ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի բացման խոսք*
2. *Ծանոթություն/Հասարակական խորհրդի անդամների ներկայացում*
3. *Նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի ներկայացում*
4. *ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով նախատեսված՝ 2026 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումների ներկայացում*
5. *Հարցուպատասխան*

Նիստի մեկնարկին նախարարը շնորհավորեց խորհրդի անդամներին և շնորհակալություն հայտնեց խորհրդում ներկայացված լինելու համար՝ ընդգծելով, որ

նրանց փորձառությունը կօգնի համատեղ քննարկումների միջոցով ձևավորել լուծումներ, որոնք կնպաստեն կատարվող հսկայածավալ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, կապահովվի առողջ երկխոսություն պետության և հասարակական կազմակերպությունների, պետության և բիզնեսի միջև:
Այնուհետև, մինչ բուն օրակարգին անցնելը, քննարկվեց նիստի անցկացման ձևաչափը: Նախարարի առաջարկությամբ հարցը դրվեց քվեարկության: Բաց քվեարկության արդյունքում՝ որոշվեց առաջին նիստն անցկացնել առանց ուղիղ հեռարձակման՝ առավել անկաշկանդ և անմիջական միջավայրում խնդիրները քննարկելու համար:
Հասարակական խորհրդի անդամների հետ ծանոթությունից հետո, նախարարը ներկայացրեց Նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերը և ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով նախատեսված՝ 2026 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումները: Նախարարն անդրադարձավ նաև առաջնահերթություններին՝ ընդգծելով, որ գյուղանտեսության ոլորտում առաջնահերթությունը լինելու է ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը, մասնավորապես՝ ինտենսիվ այգեգործությունը, բուսաբուծությունը, տոհմային անասնապահությունը, բիզնես ոլորտում՝ արտադրողականության, մրցունակության բարձրացումը, արտադրանքների ստանդարտներին համապատասխանեցումը, մրցակցային միջավայրի կայունացումը: Նշվեց, որ նախարարությունը պատրաստ է ցանկացած առաջարկի մեջ դնել ջանք, եռանդ, ֆինանսներ, եթե դա կբերի մրցունակության բարձրացմանը, տնտեսության արտադրողականության ավելացմանը, ներդրումային միջավայրի բարելավմանը, դեպի Հայաստան ներդրումների ներգրավմանը՝ միաժամանակ շեշտելով, որ կարող են դադարեցվել այն ծրագրերը, որոնք չեն ծառայելու վերը նշված նպատակների իրականացմանը:
Այնուհետև նախարարն առաջարկեց, որ հաջորդիվ նիստերի օրակարգերը ձևավորվեն խորհրդի անդամների հետ համատեղ, քանի որ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունները, բարձրացված խնդիրներն ու առաջարկները կարող են վերաբերել այն հարցերին, որոնք նախարարությունում այնքան էլ տեսանելի չեն և հավելեց, որ ներկայացված հարցերից ոչ մեկը չի անտեսվի. լոկալ հարցերը կփորձեն լուծել առանց մեծ քննարկումների, առանձին փոքր քննարկումներով՝ ըստ անհրաժեշտության ներգրավելով նաև համապատասխան մասնագետների:
Նախարարն ընդգծեց նաև հասարակական խորհրդի դերը աջակցության տեսանկյունից՝ նշելով, որ նախարարության կողմից որոշ նախաձեռնություններ, որոնք կարևոր են տնտեսական տեսանկյունից, կարող են դիմադրության արժանանալ այլ գերատեսչությունների կողմից՝ կապված տվյալ գերատեսչության գործունեության բնույթի առանձնահատկություններից, իսկ 5-10 խոշոր հասարակական կազմակերպությունների կողմից հանդես գալը կարող է նպաստել այդ նախաձեռնությունների իրականացմանը:

Խորհրդի անդամները համոզմունք հայտնեցին, որ հասարակական խորհուրդը հիմքեր կստեղծի ավելի կառուցողական և արդյունավետ աշխատելու համար և շեշտեցին իրենց պատրաստակամությումը ներգրավվելու երկրի տնտեսական զարգացման գործին: Ծավալվեց ակտիվ և արդյունավետ երկխոսություն:

Խորհրդի անդամներից արտահայտվեցին՝

Հակոբ Ավագյանը նշեց, որ իրենց ասոցիացիան փորձում է ներկայացված լինել պետության հետ երկխոսության բոլոր հարթակներում, իսկ էկոնոմիկայի նախարարությունը այն գերատեսչությունն է, որից ակնկալում են բիզնեսի խնդիրների լուծում, բիզնեսի շահերի պաշտպանվածություն: Նա նաև ավելացրեց, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից ձևավորված հասարակական խորհուրդը մուլտիսեկտորիալ ներկայացվածություն ունի, ինչը մի կողմից շատ լավ է, բայց մյուս կողմից դժվարեցնում և բարդացնում է աշխատանքը, հետևաբար կարևոր է, որ քննարկումները լինեն առավել նպատակային, նիստերի օրակարգերը ձևավորվեն առավելապես նախարարության քաղաքականությունների և ռազմավարական ուղղությունների շուրջ՝ խուսափելով փոքր, նեղ, առանձին դեպքերին վերաբերող հարցերից: Առաջարկվեց, որ ձևավորվի հիմնավորումներով օրակարգ՝ հստակ խնդիրների, առաջարկությունների և հարցերի հրատապությունից ելնելով՝ որպեսզի աշխատանքները լինեն նպատակային և արդյունավետ:

Մարամ Մանուկյանը համոզմունք հայտնեց, որ հասարակական խորհուրդը հնարավորություն կստեղծի, որ ավելի կառուցողական հիմքերի վրա դրվեն եղած խնդիրների լուծումները, նաև ավելացրեց, որ երկխոսության արդյունքում են ձևավորվելու այն բացերը, որ կան իրականում և նաև մատնանշելու այն առավելությունները, որոնք ժամանակի ընթացքում իրականացվել են և կյանքի կոչվել: Այնուհետև նա ներկայացրեց տնտեսավարողների հետ շփումների արդյունքում առանձնացված որոշ խնդիրներ և առաջարկներ, մասնավորապես՝

Հարկային և մաքսային օրենքների կայունության անհրաժեշտություն, ինչը կարևոր նախապայման է ներդրումային միջավայրի բարելավման համար, քանի որ անկայունությունը կարող է խոչընդոտել ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրումների ներգրավմանը և ընթացիկ բիզնես գործընթացների ապահովմանը: Առաջարկվեց հարցը ներառել խորհրդի օրակարգում որպես առաջնահերթ քննարկման թեմա:

Լոգիստիկ խնդիրներ, որոնց, բախվում են ինչպես ՓՄՁ-ները, այնպես էլ խոշոր ընկերությունները Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքից ելնելով: Առաջարկվեց դիտարկել ավիացիոն լոգիստիկայի (կարգո փոխադրումների) հնարավորությունը, ներառյալ պետական համաֆինանսավորմամբ՝ նշելով, որ դա ֆորս-մաժորային իրավիճակներից շատ արագ դուրս գալու լավ հնարավորություն է:

Արտահանման միասնական կլաստերների և հաբերի ձևավորում. Առաջարկվեց խթանել միասնական արտահանման կլաստերների և հաբերի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա համախմբել ռեսուրսները, բարձրացնել մրցունակությունը և

ընդլայնել միջազգային համագործակցության հնարավորությունները, քանի որ ՓՄՁ-ները խոշոր արտահանման և պատվերներ ստանալու խնդիրներ են ունենում՝ շատ հաճախ չկարողանալով ապահովել անհրաժեշտ ծավալի մատակարարում, ինչպես նաև ունենում են ճանապարհային խնդիրներ, կայունության խնդիրները:
Նախարարն արձանագրեց, որ ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները համահունչ են նախարարության ռազմավարական մոտեցումներին: Անդրադառնալով հարկային և մաքսային ոլորտին՝ նա նշեց, որ դրանք ամբողջությամբ նախարարության ուղղակի լիազորությունների շրջանակում չեն, սակայն նախարարությունը պատրաստ է ներգրավվել, քննարկել և առաջ տանել խորհրդի նախաձեռնությունները:
Անդրադառնալով լոգիստիկ խնդիրներին և արտահանման կլաստերների ձևավորմանը՝ ***նախարարը*** նշեց, որ դրանք արդեն իսկ ներառված են նախարարության արտահանման ռազմավարությունում. գործողությունների պլանում կարգոյի մասով նախատեսված է կետ, որտեղ նշված է, որ կիրականացվի հետազոտություն նպատակային շուկաների և մրցակցային առավելություններ ունեցող ապրանքների բացահայտում և եթե որոշ ապրանքներ կարող են մրցակցային առավելություններ ունենալ, պետական սուբսիդավորման գործիքակազմ կկիրառվի: Միաժամանակ շեշտվեց, որ նախարարությունը բաց է նոր առաջարկների և գաղափարների համար, դրանք կատարելագործելու և արդյունավետ իրագործելու նպատակով:
Սարգիս Կարապետյանը նշեց, որ խորհրդում ներգրավված են տարբեր ոլորտների մասնագետներ, ինչը հնարավորություն է տալիս բազմակողմանի մոտեցմամբ մշակել գործնական և կիրառելի լուծումներ և եթե նախարարությունն ունի ինչ-որ խնդիրներ, ապա այդ խնդիրները կարող են լուծվել խորհրդի անդամների կողմից, որոնք պատրաստ են ներգրավվել ոչ միայն դրանց վերհանման, այլև լուծումներ գտնելու գործընթացում: Առաջարկվեց հանձնարարություններ տրվեն, խնդիրներ տրվեն և իրենք փորձեն գտնել հնարավոր լուծումներ՝ հաշվի առնելով, որ նախարարությունն ունի առավել լայն տեսանելիություն ոլորտային առաջնահերթությունների և հրատապ խնդիրների վերաբերյալ:
Առանձին անդրադարձ արվեց նախարարության կողմից իրականացվող ԲՈՈՄ-ի ծրագրին:
Նախարարը նշեց, որ հաջորդ նիստին նախարարությունը ևս կներկայացնի 1–2 կարևոր հարց՝ կախված այդ պահի առաջնահերթությունից, օրակարգում ներառելու համար և ավելացրեց, որ ներկայումս ամենակարևոր հարցերից մեկը կապիտալի շուկայի զարգացումն է , որի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ և ընկալումներ, ինչը պահանջում է համադրված և բազմակողմանի քննարկում: Նախարարը կարևորեց հասարակական խորհրդի հարթակի օգտագործումը նման համակարգային և ռազմավարական հարցերի քննարկման համար՝ որպես տարբեր շահագրգիռ կողմերի դիրքորոշումների համադրման և լուծումների մշակման արդյունավետ գործիք:

Արմեն Ավետիսյանը նշեց, որ տոհմային ասոցիացիան համագործակցում է նախարարության հետ՝ հանդիպումների ընթացքում բերելով ինչպես խնդիրներ, այնպես էլ խնդիրների լուծումներ: Վերջին տարիներին նախարարության ձեռնարկած ծրագրերը շատ ողջունելի են, սակայն ֆերմերներից շատերը չեն օգտվում դրանցից, քանի որ փոխհատուցման շեմը ցածր է՝ նկատի ունենալով կենդանիների շուկայական գների աճը: Բացի դրանից, եթե ֆերմերը որոշի կենդանի ձեռք բերել Եվրոպայից այդ պրոցեսը 2-3 ամիս է տևելու: Կան նաև լոգիստիկ խնդիրներ, փոխադրումները կազմակերպվում են շաբաթական 1 օր, ինչպես նաև անհրաժեշտ է նախապես հերթագրում իրականացնել:
Առանձնացվեց նաև կենդանիների գլխաքանակի նվազեցման խնդիրը: Նշվեց, որ շատ ֆերմերներ կան, որոնք հողերը վերցրել են պայմանագրով, պայմանագրի ժամկետը լրացել է, հողերը դրվել են մրցույթի, ինչի արդյունքում շատերը մնացել են առանց խոտհարքի: Ունեն մինչև 60 գլուխ կով, բայց չունեն հող: Առաջարկվեց, որ հնարավորություն ստեղծվի երկարաձգելու պայմանագրի ժամկետը, հարցին օրենսդրական կարգավորում տրվի:
Արսեն Ղազարյանն առաջարկեց, որ առաջիկա քննարկումներում գերակա համարվի Հողային ռեֆորմի իրականացումը, ինչպես նաև «Նեդրումների մասին օրենք» ունենալու անհրաժեշտությունը, ինչը Հայաստանը կդարձնի առավել գրավիչ:
Ընդգծվեց, որ նախարարության կողմից իրականացվող ծրագրերը շատ լավն են, պետք է պահպանվեն և շարունակվեն և առավել հրապարակայնացվեն և ծրագրերից պետք է խոսեն ոչ միայն նախարարության պաշտոնայները, այլ նաև հասարակական խորհրդի ներկայացուցիչները, վերլուծաբանները, փորձագետները, մարդիկ, որոնք օգտվել են ծրագրերից: Անդրադարձ արվեց նաև հայ-թուրքական սահմանի բացման հարցին: Նա նշեց, որ Հայաստանի տնտեսական հատվածն այնքան կայացած է, որ կարող է Թուրքիայի հետ համագործակցել և առաջարկեց, որ ստեղծվի աշխատանքային խումբ, սահմանները բացվելուց հետո հասկանալու համար, թե ինչ ռիսկեր կստեղծվեն բիզնեսի համար, խուսափելու համար ԱՀԿ նորմերի շրջանակներում ռիսկերից, հասկանալու համար, թե որ ոլորտներում է հայկական արտադրանքը մրցունակ, որտեղ է, անհրաժեշտ իրականացնել պրոտեկցիա, որտեղ է անհրաժեշտ աջակցել բիզնեսին: Առանձնացվեցին նաև այլ խնդիրներ, ինչպիսիք են կեղծարարությունը կաթի վերամշակման, կոնյակի արտադրության մեջ և այլն: Նաև առաջարկ հնչեցվեց, որ չպետք է թույլատրվի, որ ՓՄՁ-ն 0 տոկոսով հարկվի:
Նախարարը ևս նշեց, որ անհեթեթ և անհիմն են 0 տոկոսով հարկելու մասին հայտարարությունները, քանի որ դա կարող է հանգեցնել շատ լուրջ հետևանքների, որոնցից է օրինակ համատարած հարկերից խուսափումը:
Սեդրակ Մամուլյանը նշեց, որ մշակել են ռազմավարական հայեցակարգ՝ 5 տարվա համար և զբաղվում են հիմնականում ազգային խոհանոցի ուսումնասիրությամբ և տարածմամբ: Որպես խնդիր Մամուլյանն առանձնացրեց Հայաստանում պետականորեն գրանցված ազգային խոհանոցի բացակայությունը՝ նշելով որ չկա իրավական որևէ փաստաթուղթ: Կա անհրաժեշտություն, որ լինի հայկական

խոհանոց հասկացությունը, հայկական կերակրատեսակներն անձնագրավորվեն: Շեշտվեց նաև, որ Ազգային խոհանոցը կարող է քարշակ հանդիսանալ գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար:

Նախարարը նշեց, որ այս հարցով կտրվի հանձնարարական, որպեսզի փոքր աշխատանքային խմբով այն քննարկեն:

Մարատ Ատրվմյանը նշեց, որ այլ երկրներից շատերը գալիս են Հայաստան և ուզում են բիզնես գործունեություն ծավալել, վիզա են ստանում, Հայաստանում ՍՊԸ գրանցում, սակայն առևտրային բանկերը հրաժարվում են առևտրային հաշվեհամար բացել առանց որևէ հիմնավորման՝ դա համարելով բանկային գաղտնիք: Արդյունքում՝ փաստաթղթերով ստացվում է օտարերկրյա անձանց կողմից գրանցված ՍՊԸ-ների աճ, սակայն փաստացի այդ ընկերությունները չեն կարողանում բիզնես գործունեություն ծավալել և մնում են թղթի վրա, քանի որ բանկերի կողմից առևտրային հաշիվներ չտրամադրելու հետևանքով հեռանում են երկրից:

Նախարարը նշեց, որ այդ հարցը դուրս է ՀՀ էկոնոմիկայի նախարարության տիրույթից և բանկերը, մեծամասամբ, կատարում են ռիսկերի գնահատում, որոնց հիման վրա էլ կայացնում են որոշումներ:

Նունե Մանուկյանը կարևորեց Հասարակական խորհուրդների գործունեության շարունակականությունը, նաև առաջարկեց հնարավորության դեպքում զբոսաշրջության ոլորտում պետության կողմից իրականացվող աջակցությունները հաստատվեն ավելի շուտ՝ հաշվի առնելով, որ ոլորտում գործունեություն իրականացնողները իրենց աշխատանքները պլանավորում են նախապես, մինչև բյուջեի հաստատումը:

Հայկ Մինասյանը նշեց, որ Հայաստանում չմշակվող հսկայական հողեր կան, սակայն մշակվող հողերի մակերեսը չի ավելանում, հետևաբար կա խնդիր, որի լուծման ուղղությամբ պետք է աշխատել, առաջարկեց տրամադրել իրենց կողմից իրականացված ուսումնասիրությունները:

Նախարարն առաջարկեց նախարարությանը ներկայացնել կատարված ուսումնասիրությունը և նշեց, որ ըստ անհրաժեշտության, այդ հարցը հետագայում կքննարկվի:

Հերմինե Թովմասյանը նշեց, որ իրենց կազմակերպությունն ունի լայն ներկայացվածություն մարզերում և պատրաստակամություն հայտնեց իրազեկում իրականացնել ծրագրերի մասով, ստանալ խնդիրներ, առաջադրանքներ և կատարել դրանք: Նա նաև ավելացրեց, որ ներգրավված լինելով այլ նախարարությունների հասարակական խորհուրդներում կարող են կապող օղակ հանդիսանալ նախարարությունների միջև:

Որոշվեց՝

- Օրակարգերի ձևավորումը իրականացնել համատեղ՝ խորհրդի անդամների և նախարարության մասնակցությամբ, ապահովել երկկողմանի համագործակցություն՝ խնդիրների համատեղ լուծման նպատակով,

- Քննարկումների հիմքում դնել ռազմավարական և քաղաքական նշանակության հարցեր,
- Ապահովել նիստերի արդյունավետություն՝ կենտրոնանալով գործնական արդյունքների վրա, օգտագործել խորհրդի մասնագիտական ներուժը՝ նախարարության առաջնահերթ խնդիրների լուծման համար,
- Լոկալ խնդիրներին լուծումներ տալու համար ստեղծել առանձին, փոքր աշխատանքային խմբեր:

Նախարարը վերահաստատեց նախարարության պատրաստակամությունը՝ համագործակցելու խորհրդի անդամների հետ, քննարկելու ներկայացված առաջարկները և համատեղ մշակելու այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն երկրի տնտեսական զարգացմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ Գևորգ Պապոյան

Համակարգող անձ՝ Լիլիթ Շաբոյան

Պատասխանատու անձ՝ Անժելինա Չիլինգարյան